ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

14 դեկտեմբերի 2021թ. **N 255-Ա**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«ՄԻԱՍՆԱԿԱՆ ՎԱՐԴԵՆԻՍ» ԴԱՇԻՆՔԻ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԴԱՆ ՌՈՒԲԵՆԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով «Միասնական Վարդենիս» դաշինքի լիազոր ներկայացուցիչ Վարդան Ռուբենի Բարսեղյանի 13.12.2021թ. ներկայացրած դիմումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Դիմումատուի իրավական դիրքորոշումները և ներկայացված պահանջները

«Միասնական Վարդենիս» դաշինքի լիազոր ներկայացուցիչ Վարդան Ռուբենի Բարսեղյանի 2021թ. դեկտեմբերի 13-ի դիմումում նշված է.

«1. Դիմումի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

1) 2021թ. դեկտեմբերի 5-ին տեղի են ունեցել ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները:

2) թիվ 21 տարածքային ընտրական հանձնաժողովի՝ 05.12.2021թ. Վարդենիս ավագանու ընտրությունների նախնական արդյունքների արձանագրության համաձայն «Ահարոն Խաչատրյան» կուսակցությունների դաշինքի օգտին կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը կազմել է 4993, «Միասնական Վարդենիս» կուսակցությունների դաշինքինը՝ 2206, իսկ «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցությանը՝ 6162:

3) Քվեարկության վերը նշված արդյունքը, «Միասնական Վարդենիս» կուսակցությունների դաշինքը չի վիճարկել, և ըստ այդմ՝ տարածքային ընտրական հանձնաժողովին ընտրական տեղամասերում վերահաշվարկ անելու դիմում չի ներկայացրել, քանի որ նշված արդյունքները բավարարել են Դաշինքի ակնկալիքները, մասնավորապես, նշված արդյունքներով «Միասնական Վարդենիս» կուսակցությունների դաշինքը համայնքի ավագանու կազմում ունենալու էր 5 մանդատ, «Ահարոն Խաչատրյան» դաշինքը՝ 10-ը մանդատ, իսկ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը՝ 12 մանդատ:

4) «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը տարածքային հանձնաժողովից պահանջել է վերահաշվարկ իրականացնել թիվ 21/43, 21/44, 21/46, 21/52, 21/60 և 21/74 ընտրատեղամասերում:

5) Վերահաշվարկի արդյունքում «Ահարոն Խաչատրյան» կուսակցությունների դաշինքի օգտին կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը կազմել է 4989, «Միասնական Վարդենիս» կուսակցությունների դաշինքինը՝ 2205, իսկ «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցությանը՝ 6163:

6) Վերահաշվարկի արդյունքում, թեպետ դիմողի օգտին քվեաթերթիկների թիվը նվազել է ընդամենը 1-ով, իսկ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը ավելացել է ընդամենը 1-ով, դրանով պայմանավորված էական փոփոխության են ենթարկվել բուն ընտրության արդյունքները՝ հանգեցնելով դիմող կողմին հասանելիք մանդատների 1-ով նվազման, իսկ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը՝ 1-ով ավելացման:

7) «Միասնական Վարդենիս» դաշինքի լիազոր ներկայացուցիչ Վարդան Բարսեղյանը 10.12.2021թ.-ին դիմել է թիվ 21 տարածքային հանձնաժողովին՝ Վարդենիս համայնքի բոլոր տեղամասերում վերահաշվարկ կատարելու պահանջով:

8) թիվ 21 տարածքային ընտրական հանձնաժողովը 11.12.2021թ. ին կայացրել է N 46-Ա որոշումը, որում նշված է հետևյալը. «Միասնական Վարդենիս» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ Վարդան Ռուբենի Բարսեղյանի 10.12.2021թ. դիմումը՝ թիվ 21/43, 21/44, 21/46, 21/52, 21/60, 21/74 ընտրական տեղամասի քվեարկության արդյունքների վերահաշվարկ կատարելու մասին՝ մերժել և վերահաշվարկ չիրականացնել:

9) փաստորեն՝ թիվ 21 տարածքային ընտրական հանձնաժողովը N 46-Ա որոշմամբ չի անդրադարձել է «Միասնական Վարդենիս» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցչի՝ Վարդենիս համայնքի բոլոր ընտրատեղամասերում վերահաշվարկ կատարելու պահանջին, այլ նշել է, որ մերժում է թիվ 21/43, 21/44, 21/46, 21/52, 21/60, 21/74 ընտրական տեղամասերում վերահաշվարկ անելու պահանջը, չնայած որ որոշման «Դիմումատուի ներկայացրած պահանջը» վերտառությամբ պարբերության մեջ հստակ նշել է, որ Դիմումատուն պահանջում է վերահաշվարկ կատարել Վարդենիս համայնքի բոլոր տեղամասերում:

2. Դիմումի իրավական հիմքերն ու հիմնավորումները

«Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն կամ համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն կամ վստահված անձը, եթե նրանք ներկա են եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ հատուկ կարծիք ունենալու մասին գրառում կատարելու դեպքում, իրավունք ունեն սույն օրենսգրքով սահմանված կարգով և

ժամկետներում բողոքարկելու տվյալ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները՝ տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնելով ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին (այսուհետ՝ վերահաշվարկ) դիմում»:

Օրենսգրքի 48-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն «5. Ընտրությունների արդյունքներով տարածքային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումները կարող են բողոքարկվել վարչական դատարան: Տարածքային ընտրական հանձնաժողովի այլ որոշումները, ինչպես նաև գործողությունները (անգործությունը) կարող են բողոքարկվել Կենտրոնական ընտրական հանձնաժողով օրացուցային 3 օրվա ընթացքում այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին»:

Օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ, 7-րդ 8-րդ, 13-րդ կետերի համաձայն. 2. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ 4) վերահսկողություն է իրականացնում սույն օրենսգրքի միատեսակ կիրառման նկատմամբ. 7) իր լիազորությունների շրջանակներում ընդունում է որոշումներ, որոնք պարտադիր են կատարման հանրապետության ողջ տարածքում. 8) վերացնում, ուժը կորցրած, անվավեր կամ չեղյալ է ճանաչում ընտրական հանձնաժողովների՝ սույն օրենսգրքին հակասող որոշումները, բացառությամբ համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի (բացառությամբ Երևանի) ավագանու անդամներ ընտրվելու, համայնքի ղեկավար կամ ավագանու անդամներ ընտրվելու մասին տարածքային ընտրական հանձնաժողովի որոշումների, 13) ընդունում է սույն օրենսգրքով նախատեսված որոշումներ, օրենսդրությամբ սահմանված կարգով տալիս է ընտրական գործընթացների հետ կապված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ պարզաբանումներ այն դեպքերում, երբ համապատասխան գործառույթը վերապահված չէ պատասխանատու այլ մարմինների, ինչպես նաև ընտրական գործընթացները կանոնակարգելու նպատակով ընդունում է սույն օրենսգրքին չհակասող որոշումներ.»:

Հիմք ընդունելով վերը նշված իրավական դրույթները, համադրելով դրանք սույն դիմումում նշված փաստերի հետ՝ կարելի է եզրակացնել հետևյալը.

Ա) Թիվ 21 տարածքային ընտրական հանձնաժողովի վիճարկվող որոշման ոչ օրինական լինելու մասով.

Օրենսգրքով նախատեսված քվեարկության արդյունքների (վերահաշվարկ անելու միջոցով) բողոքարկման իրավունքը չի կարող ինքնանպատակ լինել, և ընտրություններին մասնակցող անձը այդ իրավունքից պետք է օգտվի բարեխղճորեն: Ընդ որում, եթե սկզբնական արդյունքները գոհացուցիչ են անձի համար, ու չկա հստակ փաստն առ այն, որ վերահաշվարկի արդյունքում էական փոփոխություններ կլինեն, անձը չպետք է չարաշահի իր իրավունքը և դիմի արդյունքների վերահաշվարկման պահանջով: Այս ամենը հաշվի առնելով՝ «Միասնական Վարդենիս» կուսակցությունների դաշինքինը ընտրություններից անմիջապես հետո չի դիմել վերահաշվարկի պահանջով:

Մինչդեռ, վերջինիս համար քվեարկության արդյունքների էական փոփոխություն է տեղի ունեցել այն բանից հետո, երբ մեկ այլ թեկնածուի դիմումով թվով 6-ը ընտրատեղամասերում կատարվել են վերահաշվարկներ: Քվեարկության նախնական արդյունքների փոփոխությունն այնքան էական է, որ Դիմողին հասանելիք մանդատների թիվը նվազել է, իսկ քաղաքական հակառակորդինը՝ 1-ով ավելացել: Բացի այդ, ընդամենը 6-ը տեղամասերում թույլ տրված խախտումները, հիմնավոր կասկած են առաջացրել դիմողի մոտ առ այն, որ մնացած բոլոր ընտրատեղամասերում ևս առկա կլինեն այնքան խախտումներ, որ վերահաշվարկի արդյունքում էականորեն կփոխվեն դիմողի օգտին քվեարկության արդյունքները՝ վերականգնելով նախորդ վերահաշվարկի արդյունքում ի օգուտ հակառակորդ քաղաքական ուժի կորսված մանդատը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ թեև Օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված են որոշակի ժամկետներ քվեարկության արդյունքների՝ վերահաշվարկի միջոցով վիճարկման համար, սակայն դրանք չեն կարող վերաբերվել այն դեպքերին, երբ վերահաշվարկի արդյունքում էականորեն փոփոխվում է ընտրությանը մասնակցող անձի վիճակը, և որ վերջինիս մոտ վերահաշվարկ իրականացնելու արդյունքում վիճակը բարելավելու օրինական ակնկալիքն առաջանում է մինչ այդ տեղի ունեցած վերջնահաշվարկի արդյունքների ի հայտ գալուց հետո: Օրենքի միայն այս մեկնաբանությունը, մեր կարծիքով, լիարժեք կհամապատասխանի Սահմանադրության՝ անձանց ընտրական իրավունքներին և դրանց պաշտպանությանը վերաբերվող դրույթների հետ, իսկ հակառակ մեկնաբանությունը, ուղղակիորեն կհակասի Ընտրական օրենսգրքի տրամաբանությանը (օրինակ՝ համաձայն Օրենսգրքի 3-րդ հոդվածի՝ Հանրային իշխանությունները հավասար պայմաններ են ապահովում ընտրողների ընտրական իրավունքի իրականացման համար):

Բ) Վարդենիս համայնքի բոլոր ընտրատեղամասերում վերահաշվարկ անելուն պարտավորեցնելու պահանջի մասով.

«Միասնական Վարդենիս» կուսակցությունների դաշինքինը թիվ 21 տարածքային ընտրական հանձնաժողովից պահանջել է ոչ թե թիվ 21/43, 21/44, 21/46, 21/52, 21/60 և 21/74 ընտրատեղամասերում վերահաշվարկ կատարել այլ Վարդենիս համայնքի բոլոր ընտրատեղամասերում: Մինչդեռ թիվ 21 տարածքային ընտրական հանձնաժողովը մերժել է միայն թիվ 21/43, 21/44, 21/46, 21/52, 21/60 և 21/74 ընտրատեղամասերում վերահաշվարկ կատարելը, իսկ մնացած համայնքներում թեպետ չի մերժել վերահաշվարկի կատարումը, սակայն փաստացի անգործություն է ցուցաբերում և այդ համայնքներում վերահաշվարկ չի կատարում: Ուստիև, հիմք ընդունելով ՀՀ Կենտրոնական հանձնաժողովի՝ Օրենսգրքով վերապահված լիազորությունները, վերջինս իրավասու է պարտավորեցնել թիվ 21 տարածքային հանձնաժողովին իրականացնելու վերահաշվարկ առնվազն Վարդենիս համայնքի այն ընտրատեղամասերում, որոնցում

վերահաշվարկի կատարումը չի մերժվել տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից:

3. Դիմումով նշված պահանջը

Հիմք ընդունելով ամբողջ վերը նշվածը և ղեկավարվելով Օրենսգրքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով, 50-րդ և 51-րդ հոդվածներով՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովից խնդրում ենք՝

1. Վերացնել թիվ 21 տարածքային ընտրական հանձնաժողովի 11.12.2021թ.ի «Միասնական Վարդենիս» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ Վարդան Ռուբենի Բարսեղյանի դիմումով թիվ 21/43, 21/44, 21/46, 21/52, 21/60 և 21/74 ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկի պահանջի մասին դիմումը մերժելու վերաբերյալ» N 46-Ա որոշումը (այսուհետ՝ որոշում).

2. Պարտավորեցնել թիվ 21 տարածքային ընտրական հանձնաժողովին՝ իրականացնելու Վարդենիս համայնքի բոլոր ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկ, իսկ նախորդ պահանջը մերժելու դեպքում, պարտավորեցնել վերահաշվարկ իրականացնել Վարդենիս համայնքի՝ վիճարկվող որոշման մեջ չնշված մյուս բոլոր ընտրական տեղամասերում:»:

Դիմումը ստորագրված է «Միասնական Վարդենիս» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ Վարդան Ռուբենի Բարսեղյանի անունից հանդես եկող անձ, փաստաբան Արթուր Հովհաննիսյանի կողմից: Դիմումին կից ներկայացված են.

1. Վարդան Ռուբենի Բարսեղյանի՝ լիազոր ներկայացուցչի վկայականի և անձը հաստատող փաստաթղթի պատճենները.

2. թիվ 21 տարածքային ընտրական հանձնաժողովի 11.12.2021թ. N 46-Ա որոշման պատճենը.

3. Վարդան Ռուբենի Բարսեղյանի կողմից 13.12.2021թ. տրված լիազորագիր.

4. Արթուր Հովհաննիսյանի անձը հաստատող փաստաթղթի պատճենը և փաստաբանի արտոնագրի պատճենը:

2. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումը

1) Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, ուսումնասիրելով դիմումը և կից փաստաթղթերը, պարզել է, որ դիմումը ներկայացված է ներկայացուցչի միջոցով և ստորագրված է Արթուր Հովհաննիսյանի կողմից, որին կից ներկայացված է «Միասնական Վարդենիս» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ Վարդան Ռուբենի Բարսեղյանի կողմից տրված լիազորագիր: Արթուր Հովհաննիսյանը ներկայացել է նիստին: Նիստին ներկայացել է նաև փաստավան Արամ Օրբելյանը, ով ներկայացրեց Միասնական Վարդենիս» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ Վարդան Ռուբենի Բարսեղյանի կողմից տրված լիազորագիր:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը թիվ 21 տարածքային ընտրական հանձնաժողովից պահանջել և ստացել է 11.12.2021թ. թիվ 46-Ա որոշման ընդունման համար հիմք հանդիսացած նյութերը:

2) Դիմումատուն ոչ օրինական է համարում վիճարկվող որոշումն այն պատճառաբանությամբ, որ դիմումատուի համար քվեարկության արդյունքների էական փոփոխություն է տեղի ունեցել այն բանից հետո, երբ մեկ այլ թեկնածուի դիմումով թվով 6 ընտրատեղամասերում կատարվել են վերահաշվարկներ: Քանի որ դիմումատուին հասանելիք մանդատների թիվը 1-ով նվազել է, իսկ մյուս թեկնածուինը՝ 1-ով ավելացել, ուստի, «թեև Օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված են որոշակի ժամկետներ քվեարկության արդյունքների՝ վերահաշվարկի միջոցով վիճարկման համար, սակայն դրանք չեն կարող վերաբերվել այն դեպքերին, երբ վերահաշվարկի արդյունքում էականորեն փոփոխվում է ընտրությանը մասնակցող անձի վիճակը, և որ վերջինիս մոտ վերահաշվարկ իրականացնելու արդյունքում վիճակը բարելավելու օրինական ակնկալիքն առաջանում է մինչ այդ տեղի ունեցած վերջնահաշվարկի արդյունքների ի հայտ գալուց հետո»:

Դիմումատուն նշում է նաև, որ «ընդամենը 6 տեղամասերում թույլ տրված խախտումները, հիմնավոր կասկած են առաջացրել դիմողի մոտ առ այն, որ մնացած բոլոր ընտրատեղամասերում ևս առկա կլինեն այնքան խախտումներ, որ վերահաշվարկի արդյունքում էականորեն կփոխվեն դիմողի օգտին քվեարկության արդյունքները՝ վերականգնելով նախորդ վերահաշվարկի արդյունքում ի օգուտ հակառակորդ քաղաքական ուժի կորսված մանդատը:»:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 50-րդ հոդվածը մանրամասն կարգավորում է վերահաշվարկի ինստիտուտը: Համաձայն վկայակոչված իրավանորմի 1-ին մասի.

«Ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն կամ համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն կամ վստահված անձը, եթե նրանք ներկա են եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ հատուկ կարծիք ունենալու մասին գրառում կատարելու դեպքում, իրավունք ունեն սույն օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում բողոքարկելու տվյալ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները՝ տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնելով ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին (այսուհետ՝ վերահաշվարկ) դիմում:

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում կարող է ներկայացվել միայն համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն»:

Նշված իրավադրույթը հստակ և աներկբա սահմանում է վերահաշվարկի դիմում ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների կազմը՝ միաժամանակ ամրագրելով ներկայացված իրավունքի իրացման կարևորագույն պայմանները՝ վերահաշվարկի իրավունքը իրացնել Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում: Թե՛ վերահաշվարկի դիմումներ ներկայացնելու կարգը և թե՛ նման դիմումներ ներկայացնելու ժամկետները սահմանված են Ընտրական օրենսգրքով:

Իրավունքի իրացման ժամկետային սահմանափակումը հանդիսանում է ընտրական իրավահարաբերությունների առանձնահատկություն, քանզի քվեարկության օրվանից հետո մինչև ընտրության արդյունքների ամփոփումը սահմանադրական օրենքը սահմանել է պարտադիր կատարման գործառույթներ, որոնք հաջորդում են միմյանց, և յուրաքանչյուր գործառույթի ժամկետները խիստ որոշակի են՝ ապահովելու համար ընտրական գործընթացի տվյալ փուլի ամբողջականությունը:

Ավելին, դիմումատուն նշում է, նախնական արձանագրությամբ վավերացված քվեարկության արդյունքը «Միասնական Վարդենիս» կուսակցությունների դաշինքը չի վիճարկել, և ըստ այդմ՝ տարածքային ընտրական հանձնաժողովին ընտրական տեղամասերում վերահաշվարկ անելու դիմում չի ներկայացրել, քանի որ «նշված արդյունքները բավարարել են Դաշինքի ակնկալիքները, մասնավորապես, նշված արդյունքներով «Միասնական Վարդենիս» կուսակցությունների դաշինքը համայնքի ավագանու կազմում ունենալու էր 5 մանդատ, «Ահարոն Խաչատրյան» դաշինքը՝ 10 մանդատ, իսկ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը՝ 12 մանդատ»:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնելու, որ «Միասնական Վարդենիս» կուսակցությունների դաշինքը գտել է, որ քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացում չեն եղել խախտումներ և արդյունքներն արտացոլել են ընտրողների իրական կամաարտահայտությունը, ինչով էլ պայմանավորված, չի վիճարկել քվեարկության արդյունքները:

Իրավասու սուբյեկտներին վերահաշվարկի պահանջ ներկայացնելու իրավունք վերապահելն ինքնանպատակ չէ: Իրավասու սոբյեկտները պետք է վիճարկեն քվեարկության արդյունքները՝ վերահաշվարկ կարատելու պահանջով դիմում ներկայացնելով, եթե գտնում են, որ տվյալ տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփումը կատարվել է օրենսդրության խախտմամբ և կազմված արձանագրությունում նշված տվյալները չեն արտացոլում քվեարկության իրական արդյունքները: Վերահաշվարկի պահանջ ներկայացնելու իրավունքը, իհարկե, սուբյեկտիվ իրավունք է և

դրանից օգտվելու ծավալը որոշում է կոնկրետ սուբյեկտը, սակայն, այն չի կարող ընկալվել որպես իրավիճակային գործադրման առարկա:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի 16-րդ մասը սահմանում է. «Տարածքային ընտրական հանձնաժողովը մերժում է ընտրական տեղամասի քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմումը և վերահաշվարկ չի իրականացնում, եթե պահանջվել է քվեարկության արդյունքների վերահաշվարկի իրականացում սույն հոդվածի դրույթների խախտումով:»: Ակնհայտ է, որ Ընտրական օրենսգիրքը որևէ բացառություն չի սահմանում սույն կանոնի կիրառման հարցում, այդ թվում նաև այն դեպքում, երբ արդեն իսկ կատարված վերահաշվարկի արդյունքում տեղի են ունենում քվեարկության արդյունքների էական փոփոխություններ: Օրենսդիրը պատահական չի սահմանում հստակ ժամկետներ՝ վերահաշվարկի դիմում ներկայացնելու համար, ընդ որում, բուն վերահաշվարկի աշխատանքները կատարելու համար ժամկետը մեկնարկում է այն ժամանակ, երբ ավարտված է լինում վերահաշվարկի դիմում ներկայացնելու վերջնաժամկետը, որպեսզի դիմումատուների համար որոշիչը լինի խախտմամբ ամփոփված քվեարկության արդյունքների վերանայումը և իրական արդյունքների արտացոլումը տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունում, և ոչ որևէ այլ նպատակ:

3) Դիմումատունի պահանջը՝ պարտավորեցնել թիվ 21 տարածքային ընտրական հանձնաժողովին՝ իրականացնելու Վարդենիս համայնքի բոլոր ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկ, իսկ նախորդ պահանջը մերժելու դեպքում, պարտավորեցնել վերահաշվարկ իրականացնել Վարդենիս համայնքի՝ վիճարկվող որոշման մեջ չնշված մյուս բոլոր ընտրական տեղամասերում, դիմումատուն հիմնավորում է նրանով, որ «Միասնական Վարդենիս» կուսակցությունների դաշինքը թիվ 21 տարածքային ընտրական հանձնաժողովից պահանջել է «ոչ թե թիվ 21/43, 21/44, 21/46, 21/52, 21/60 և 21/74 ընտրատեղամասերում վերահաշվարկ կատարել այլ Վարդենիս համայնքի բոլոր ընտրատեղամասերում», սակայն, թիվ 21 տարածքային ընտրական հանձնաժողովը «մերժել է միայն թիվ 21/43, 21/44, 21/46, 21/52, 21/60 և 21/74 ընտրատեղամասերում վերահաշվարկ կատարելը, իսկ մնացած համայնքներում թեպետ չի մերժել վերահաշվարկի կատարումը, սակայն փաստացի անգործություն է ցուցաբերում և այդ համայնքներում վերահաշվարկ չի կատարում:»:

Վերոգրյալի կապակցությամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ թիվ 21 տարածքային ընտրական հանձնաժողովը վիճարկվող որոշումը՝ «թիվ 21/43, 21/44, 21/46, 21/52, 21/60 և 21/74 ընտրական տեղամասերի քվեարկության արդունքների վերահաշվարկ չկատարելու մասով» կայացվել է Ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի 16-րդ մասի կանոնների պահպանմամբ, իսկ ինչ վերաբերում է մյուս ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքների վերհաշվարկին, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ բոլոր ընտրական տեղամասերի վերաբերյալ

վերահաշվարկ կատարելու մասին դիմումը ևս ներկայացվել է Ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի պահանջների խախտմամբ:

Նկատի ունենալով, որ սույն դիմումով ներկայացվել է նաև պարտավորեցման պահանջ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ Ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ թիվ 21 տարածքային ընտրական հանձնաժողովը պետք է մերժեր վերահաշվարկ իրականացնելու պահանջի մասին «Միասնական Վարդենիս» կուսակցությունների դաշինքի 10.12.2021թ. դիմումն ամբողջությամբ և վերահաշվարկ չկատարեր, քանի որ դիմումը ներկայացվել էր Ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի պահանջների խախտմամբ: Նշվածի հիմքով Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ սույն դիմումով ներկայացված պարտավորեցման պահանջը ևս ենթակա է մերժման:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 47-49-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. «Միասնական Վարդենիս» դաշինքի լիազոր ներկայացուցիչ Վարդան Ռուբենի Բարսեղյանի 13.12.2021թ. դիմումը մերժել ամբողջությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ.Մուկուչյան**